



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԱՆՏԱՌԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՈՒՆԵՍ

Պարոն Ա. Նալբանդյանին

26 դեկտեմբեր 2016թ

Թիվ 114

Պարոն մարզպետ

Անտառամուտի համայնֆապետարանից Ձեզ ենք ներկայացնում համայնֆ

ափագանու թիվ 53Ա օրակարգը և 54Ն որոշումը :

Համաձայն հավելվածի :

Անտառամուտ համայնֆի ղեկավար



Ա. Գեորգյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Անտառամուտ համայնք

հեռ. 093917275

ՈՐՈՇՈՒՄ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ N 53 Ա.

ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016թ-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝

ավագանին որոշում է.

Հաստատել Անտառամուտ համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. Անտառամուտ համայնքի 2017-2021թթ զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Վարդան Գևորգյան			
Ալվարդ Ավետիսյան			
Արմեն Գևորգյան			
Խաչիկ Ավետիսյան			

Անտառամուտ համայնքի ղեկավար՝

Ա. Գևորգյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱԹՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Անտառամուտ համայնք

հեռ. 093917275

ՈՐՈՇՈՒՄ


23 դեկտեմբեր 2016թ N 54-Ն

ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱԹՆՔԻ 2017-2021ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Ղեկավարվելով << ՏԻՄ մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով

Անտառամուտ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Անտառամուտ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը :

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Զեկոյակ՝
Վարդան Գևորգյան			
Ալվարդ Ավետիսյան			
Արմեն Գևորգյան			
Խաչիկ Ավետիսյան			

Անտառամուտ համայնքի ղեկավար



Ա. Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶԻ

ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու թիվ 54Ն որոշմամբ

նիստի ամսաթիվը 23.12.2016թ

ԱՆՏԱՌԱՄՈՒՏ 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	9
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	9
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւժՀՄ) վերլուծություն	12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական	12
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	13
4. ՀԶԾ ֆինանսավորում	17
5. ՀԶԾ մոնիթորինգ	17

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Անտառամուտ համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք բանավեճի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառամուտ համայնքի 2017-2021 թթ. Ջարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնք իրականացնող ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Ջարգացման ռազմավարության և գերակայությունների սահման մանժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան խնդիրներ՝

ա/ միջ համայնքային ճանապարհի անմխիթար վիճակ

բ/ փողոցների գիշերային լուսավորություն

գ/ համայնքի գերեզմանատան պարիսպի վերանորոգում

դ/ կանգառների կառուցում

ե/ ակումբի շենքի վերանորոգում և գույքի համալրում

զ/ աշխատատեղերի ստեղծում, մշակույթային կյանքի բարելավում

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Անտառամուտ համայնքը գտնվում է մարզկենտրոնից 30 կմ դեպի հյուսիս-արևելք: Վանաձոր-Ալավերդի մայրուղու ձախ մասում, սահմանակից է Վահագնի, Չերագյուղ համայնքներին: Համայնքն ունի աշխարհագրական ոչ այնքան բարենպաստ դիրք, ծովի մակարդակից բարձր է 1480մ: Համայնքի վարչական տարածքով հոսում է Արգաթան գետը: Կլիման բարեխառն է, ձմեռը ցուրտ, աշունը կայուն և երկար: Գարունը երկարատև է: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են ապրիլի 2-րդ կեսից: Ամառը զով է ու չոր: Հաճախ են լինում երաշտի տարիներ, որից տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները: Համայնքի վարչական տարածքը կազմում է 549 հա, որից վարչական 110 հա, Խոտհարք 55 հա, արոտավայր 240 հա և այլն: Գյուղացիներն զբաղվում են հիմնականում անասնապահությամբ, դաշտավարությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքն ունի 1 հիմնական դպրոց, բուժ- ամբուլատորիա, ակումբ-գրադարան/կիսաքանդ/, տեղադրված է նաև 2 բջջային հեռախոսակապի անտենաներ: Համայնքում կա նաև զբոսաշրջությանը հետաքրքրող և հանգստի վայր առաջացնող ջրվեժ իր << Թոչկան >> անունով:

Համայնքի շրջակայքը հարուստ է բազալտով, կավով, ավազով և սևահողային արգավանդ դաշտերով:

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ չկա աշխատատեղ և մեծ է արտագախթի վտանգը:

Համայնքի բնակչության հիմնական թիվը՝ 309

այդթվում՝

տղամարդ 155

կին 154

0-6 տարեկան 15

7-17 տարեկան – 18

Միջին տարիքի- 140

60 տարեկանից բարձր -55

Բնակչության սոցիալական կազմը՝

այդթվում՝

թոշակառուներ –59

երկկողմանի ծնողագուրկ 1

հաշմանդամներ – 14

աշխատանք ունեցողներ – 30

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 7305.0 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 2125. մլն դրամ (25%),
- Համայնքում գործում է 1 խանութ :
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	17հա	70տ
կաղամբ	1հա	3տ
բանջարեղեն	2հա	2տ
միս		18տ
բուրդ		800կգ
ձու		20հազ.հատ
մեղր		2տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	378
Այդ թվում կովեր	183
Մանր եղջերավոր անասուններ	141
ոչխարներ	97
խոզեր	80
Այդ թվում մայրեր	5
թռչուններ	342
Այդ թվում հավեր	320
մեղվաբնտանիքներ	103

- Համայնքում գործում է 1 հիմնական դպրոց, որտեղ սովորում են 17 աշակերտ:

Դպրոցն ունի 11 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժ-ամբուլատորիա, որն սպասարկում է համայնքի բնակիչներին :

Բուժ-ամբուլատորիայում աշխատում է 1 աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 10 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 70%:
- Անտառամուտ համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային մատուտ և խաչքարեր
 - Սուրբ մատուռ
 - Խաչքարեր
 - Թուղմանուկ
 - Սուրբ գորավոր ծառ << Կաղնի >>
 - միջնադարյան խաչքարեր

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսված են հետևյալ ծրագրերը՝
- Գալիք հինգ տարիների համար նախատեսվում է լուծել պետության աջակցության համայնք տանող ճանապարհների խնդիրը :
- Գիշերային լուսավորության խնդիրը :
- Կանգառների կառուցում
- Ակումբի շենքի վերանորոգում :

Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի տարագրում կմեծանա երեխաների ակտիվությունը, ճանաչողությունը և ապագայում նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	7305.0 մլն	7350.0 մլն	7400.0 մլն	7500.0 մլն	7800.0 մլն
Ա	Հարկային եկամուտներ	2115.0 մլն	2115.0 մլն	2215.0 մլն	2326.0 մլն	24.0 մլն
1	Հողի հարկ	811 հազար	811 հազար	811 հազար	811 հազար	811 հազար
2	Գույքահարկ	549 հազար	549 հազար	549 հազար	549 հազար	600 հազար
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	24 հազ	24 հազ	24 հազ	24 հազ	24 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	708 հազ	708 հազ	708 հազ	750 հազ	750 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	5180.6 մլն	5180.6 մլն	5180.6 մլն	505.0 մլն	580.0 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Անտառամուտ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում :Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,

.բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,

.ֆինանսի բացակայությունը

.Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

.ֆինանսական սղությունը,

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը,.

3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.գործազրկությունը և արտագախթ

4) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքաբնակների աղքատությունը,

6) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը,համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

.հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

.կանգառների բացակայությունը,

7) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

8) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ջրագծի քայքայված վիճակը,

.գյուղ տեխնիկայի նացակայությունը

.հողերի անմշակությունը

9) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

10) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Անտառամուտ համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից,

.գովազդի բացակայությունը,

.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

11) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

12) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

13) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծման ըխոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը, բուժ-գործիքների պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը

14) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

<i>Համայնքի ուժեղ կողմեր</i>	<i>Համայնքի թույլ կողմեր</i>
.Բանիմաց աշխատուժի առկայություն .հիմնական դպրոցի առկայություն. - Բուժ-ամբուլատորիայի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն .Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հանգստի վայր .Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն	.Ճանապարհի ամփիթար վիժակ .գիշերային լուսավորության բացակայում .Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Ծնելիության նվազում .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ .Թերզբաղվածության բարձր մակարդակ .Ներհամայնքային ճանապարհների անբարենպաստ վիճակ .Տրանսպորտային ցանցի բացակայություն .Աշխատատեղերի պակաս .հողերի անմշակ վիժակ
<i>Հնարավորություններ</i>	<i>Սպառնալիքներ</i>
. աշխատուժի առկայություն .Խմելու ջրի պաշարի առկայություն .Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն .Տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրեր	.Տարերային աղետների վտանգ .Գյուղ. մթերքների գների նվազում .Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն .Մպառման շուկաների դժվար հասանելիություն .Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն .Խիստ կլիմա /ցրտահարություն/ .Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որպեսի մարդիկ ապրեն արժանապատիվ կյանքով

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել որակյալ ճանապարհով
- Զարգացնել հողագործությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել
- Համայնքի սեփական տարեկան եկամուտների աճի բարցացում

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:
- 3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- 9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- 10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:

- 11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 14) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Անտառամուտ համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:
- 15) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 16) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 17) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 18) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական⁸ և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

Անտառամուտ համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և բուժօգնության ծանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի «Ծանապարհների բարեկարգում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է համայնքի բնակիչներին բարեկարգ ծանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել միջհամայնքային ծանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ծանապարհների բարեկարգում:

1.3. Կատարել դաշտամիջյան ծանապարհների բարեկարգում:

1.4. Հեղեղատարներ կառուցել:

1.5. Ներհամայնքային ծանապարհների լուսավորություն անցկացնել:

1.6. Կատարել ծանապարհների կահավորում:

1.7. Երկու կանգառի կառուցում:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի երթուղային ավտոբուսը աշխատի ամեն օր :

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա և անհրաժեշտ գումարի 1%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Անտառամուտ համայնքի բոլոր բնակիչները և հարևան համայնքի բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ծանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, որի օգտին գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Այժմ համայնքի ծանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն և բացակայում է փողոցային լուսավորությունը: Համայնքի 25 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթնեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի: Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 25 մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 50 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 75մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

Անտառամուտ համայնքում մշակութային կյանքի զարգացման նպատակով կիրականացվի «Մշակույթի տան //Ակումբի շենք// » ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքում ունենալ ժամանակակից մշակույթի համալիր կենտրոն՝ համայնքապետարան, դահլիճ, ակումբ-գրադարան: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Կահավորված և ջեռուցվող մշակույթի կենտրոն

2. Մարզագույքով ապահովված դահլիճ

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել դահլիճի կահավորման համար անհրաժեշտ գույք:

1.2 կահավորել դահլիճը:

1.3. Ջեռուցման համակարգ ձեռք բերել:

1.4. Ջեռուցման համակարգը տեղադրել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել տարբեր տեսակի ժամանակակից գույք

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 1%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Անգեղակոթ համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2020թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափազրույթ: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գումարային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց ինքուժ տնտեսական համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրում:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 8մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 20մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 28մլն դրամ:

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

«ՄԻԶԶԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՀԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ»
(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Անտառամուտ համայնքում ճանապարհի խթանել:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների բարեկեցիկ կյանք						
	Ցուցանիշներ Եկամտի աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	105	110	115	120	130
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերակառուցված ճանապարհ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3	7	7	7	7
	2. Կառուցված ճանապարհ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3	6	9	12	15
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձեռք բերել համապատասխան գումար: 1.2. Ճանապարհի բարելավում: 1.3. կառուցել ջրահեռացում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 25մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 50մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 75մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Անտառամուտ համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում ներկայումս ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում, բնակչությունն զերծ է մնում մարզկենտրոնից:						

[illegible]

[illegible]

8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը	93	18,6	18,6	18,6	18,6	18,6	2,79	90,21
9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում	17500	3500	3500	3500	3500	3500	525	16975
10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը	0	0	0	0	0	0	0	0
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում	0	0	0	0	0	0	0	0
12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը	41	12,3	12,3	12,3	4,1		1,23	39,77
14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում	0	0	0	0	0	0	0	0
15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում	0,5	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,5	0

0	0	0	7	86	0	0	0	0
			7500	10000				լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0
			11	30				լուծված չէ
0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0,5		առկա է			

